ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԱՅՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2024Թ. ՓԵՏՐՎԱՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

2024թ.

2024Թ.-Ի ՓԵՏՐՎԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

- ***Համաշխարհային տնտեսություն.*** փետրվարին ԱՄՆ-ում, Չինաստանում և ՌԴ-ում տնտեսական ակտիվության աճ է գրանցվել, իսկ Եվրագոտում շարունակվում է տնտեսական ակտիվության անկումը՝ սակայն ավելի թույլ տեմպերով: Նավթի և մոլիբդենի միջազգային գները աճել են հունվար ամսվա նկատմամբ, իսկ պղնձի և պարենային ապրանքների գները՝ նվազել:
- ***Տնտեսության արտաքին հատված.*** արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի արագացում: Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ՀՀ դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվել է 2.7%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ շուրջ 3.3%-ով: Ռուսական ռուբլու նկատմամբ դրամի արժևորման տեմպը նախորդ ամսվա համեմատ թուլացել է՝ կազմելով 21.8%: Վերջին երկու տարիների անընդմեջ աճից հետո ընթացիկ տարվա հունվար-փետրվար ամիսներին արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի նվազում (նվազումը փետրվարին կազմել է 2.6%):
- ***Տնտեսության իրական հատված.*** տնտեսական ակտիվության աճի տեմպը փետրվարին կազմել է 16.3%՝ հունվարի նկատմամբ արագանալով 5.6 տոկոսային կետով՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության և առևտրի աճերի արագացմամբ: 12 ամսյա գնաճը կազմել է -1.7%, մինչդեռ բնականոն գնաճը կազմել է -0.7%:
- ***Տնտեսության ֆինանսական հատված.*** բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ 21.9% վարկերի ծավալների աճով, որն ուղեկցվել է միջինում կայուն տոկոսադրույքներով: Իսկ պետական պարտատոմսերի տոկոսադրույքները բարձր հարաբերական պահանջարկի ազդեցությամբ զգալի նվազել են:
- ***Տնտեսության հարկաբյուջետային հատված.*** հարկային եկամուտների աճի տեմպը կազմել է 8.7%, իսկ պետական բյուջեի ծախսերի աճը՝ 34%: Չնայած փետրվարի պակասուրդին, հունվար-փետրվար ամիսների բյուջեի հաշվեկշիռը դրական է եղել՝ 3.8 մլրդ դրամի հավելուրդով:

1. **Միջազգային զարգացումներ: Տարեսկզբից համաշխարհային տնտեսական ակտիվությունը մեծ թափ է հավաքել՝ փետրվարին հասնելով վերջին ութ ամիսների ամենաբարձր մակարդակին: Մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում աճի միտումները պահպանվել են:** ԱՄՆ-ում գրանցված աճը պայմանավորված է եղել գործարար ակտիվության աճով՝ արձանագրելով վերջին ութ ամիսների լավագույն ցուցանիշը: Ծառայությունների և մշակող արդյունաբերության ոլորտները շարունակել են աճել. ընդ որում, մշակող արդյունաբերության ոլորտում գրանցվել է աշխատանքի ընդունման թվի աճ, իսկ ծառայությունների ոլորտում՝ աշխատատեղերի ստեղծման տեմպի դանդաղում: Եվրագոտու տնտեսությունը որոշակի կայունություն է դրսևորել՝ պայմանավորված ծառայությունների ոլորտի աճով, սակայն մշակող արդյունաբերության նվազման միտումը պահպանվել է: Եվրագոտու անդամ երկրներից Իսպանիայի, Իռլանդիայի և Իտալիայի տնտեսությունների արագ աճին հակազդել են Գերմանիայի և Ֆրանսիայի տնտեսությունների անկումը: Չինաստանում և ՌԴ-ում ծառայությունների և մշակող արդյունաբերության ոլորտների աճի միտումը պահպանվել է: Ընդ որում, փետրվարին Չինաստանում գրանցվել է զբաղվածության կրճատում, իսկ ՌԴ-ում, դրական սպասումներով պայմանավորված, մշակող արդյունաբերության ոլորտում գրանցվել է գործարար ակտիվության և զբաղվածության աճ:

Գծապատկեր 1.1. Composite PMI-ի միտումները



Փետրվարին գնաճը ԱՄՆ-ում կազմել է 3.2%՝ հունվարի 3.1%-ի համեմատ. էներգիայի և բենզինի գների նվազել են, իսկ սննդի, կացարանի, նոր մեքենաների գներն աճել են ավելի մեղմ տեմպերով: Եվրագոտում գնաճը շարունակել է նվազել՝ փետրվարին կազմելով 2.6% (հունվար՝ 2.8%), իսկ ՌԴ-ում գնաճի տեմպը արագացել է՝ կազմելով 7.8%, որը պայմանավորված է եղել ծառայությունների, պարենային և ոչ պարենային ապրանքների գնաճային ճնշումներով: Չինաստանում մինչ հունվար շարունակվող գնանկումային զարգացումներից հետո, փետրվարին գրանցվել է 0.7% գնաճ, որը պայմանավորված է եղել Լուսնային նոր տարվա կապակցությամբ սպառման մեծ ծավալներով:

Գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից շարունակվել է իրականացվել զսպող քաղաքականություն՝ պահպանելով սահմանված տոկոսադրույքները: Մասնավորապես՝ ԱՄՆ ԴՊՀ քաղաքականության տոկոսադրույքը պահպանվել է 5.25 - 5.5% մակարդակում, ԵԿԲ տոկոսադրույքը՝ 4.5%, ՌԴ ԿԲ հիմնական տոկոսադրույքը՝ 16%, Չինաստանի բանկի տոկոսադրույքը՝ 3.45% մակարդակում:

Գծապատկեր 1.2. Գնաճն ու դրամավարակային քաղաքականության արձագանքը գործընկեր երկրներում



Մետաղների և պարենային ապրանքների շուկաներում փետրվարին դիտվել են հետևյալ միտումները. նավթի միջազգային գինը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 4.4%-ով, մոլիբդենի գինը՝ 0.6%-ով, պղնձի գինը նվազել է 0.5%-ով, իսկ պարենային ապրանքների գները՝ 0.6%-ով: Նավթի միջազգային գնի աճն առավելապես պայմանավորված է եղել Մերձավոր Արևելքում շարունակվող հակամարտությամբ, մասնավորապես, Կարմիր ծովում հութիների կողմից իրականացվող հարձակումներով: Արդյունքում, փետրվարին նավթի միջազգային գինը կազմել է 83.8 ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց՝ նախորդ ամսվա նկատմամբ աճելով 4.4%-ով, իսկ նախորդ տարվա փետրվարի նկատմամբ՝ 1.3%-ով:

Պղնձի միջազգային գինը փետրվարին նախորդ ամսվա համեմատ նվազել է 0.5%-ով՝ կազմելով 8,300 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց, իսկ նախորդ տարվա համեմատ՝ 7.1%: Մոլիբդենի

միջազգային գինը դեկտեմբերին գրանցված կտրուկ անկումից հետո հունվարին կազմել է 47,154 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց՝ նախորդ ամսվա նկատմամբ աճելով 0.6%-ով, իսկ նախորդ տարվա փետրվարի նկատմամբ նվազելով 50.9%-ով:

Պարենային ապրանքների համաշխարհային գինը նախորդ ամսվա համեմատ նվազել է 0.6%-ով՝ պայմանավորված հացահատիկի և բուսական յուղերի գների անկմամբ:

Գծապատկեր 1.3. Նավթի, մետաղների և պարենի գների զարգացումներ





2. Արտաքին հատվածի զարգացումներ: 2024թ. փետրվարին արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի զգալի արագացում: Փետրվարին արտահանումն աճել է 2.9 անգամ (նախորդ ամսվա աճը՝ 2.1%), որին ամենամեծ նպաստումն է ունեցել դեպի ԱՄԷ արտահանումը: **Ներմուծումն աճել է 79.9%-ով (նախորդ ամսվա աճը՝ 65.7%)**:

Գծապատկեր 2.1. Արտահանման և ներմուծման միտումները, մլն դոլար



Վերջին երկու տարիների անընդմեջ աճից հետո ընթացիկ տարվա հունվար-փետրվար ամիսներին արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի նվազում: 2024թ. փետրվար ամսին արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի 2.6% նվազում (նախորդ ամսվա նվազումը՝ 3.2%): Նվազմանը հիմնականում նպաստում է ունեցել ՌԴ զբոսաշրջիկների թվի նվազումը (շուրջ 12.1%-ային կետ):

Գծապատկեր 2.2. ՌԴ-ից և այլ երկրներից դեպի ՀՀ զբոսաշրջիկների հոսքերը



Շարունակվել է դրամական փոխանցումների նախորդ տարվա նվազման միտումները: 2024թ. փետրվարին ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները նախորդ տարվա փետրվարի համեմատ նվազել են շուրջ 53.4%-ով՝ պայմանավորված հիմնականում ՌԴ-ից փոխանցումների շուրջ 66.8% նվազմամբ:

Գծապատկեր 2.3. Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը



ՀՀ դրամը փետրվարին ռուբլու նկատմամբ շարունակել է արժևորվել, իսկ դոլարի և եվրոյի նկատմամբ պահպանել է արժեզրկման միտումը: Մասնավորապես՝ փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է շուրջ 2.7%-ով: Եվրոյի նկատմամբ ևս դրամը արժեզրկվել է 3.3%-ով, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ՝ արժևորվել 21.8%-ով:

Գծապատկեր 2.4. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ



3. ՀՀ տնտեսական զարգացումներ: Տնտեսական ակտիվության աճի բարձր տեմպերը պահպանվել են նաև 2024թ. փետրվարին և կազմել 16.3%՝ հունվարի նկատմամբ արագանալով 5.6 տոկոսային կետով՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության և առևտրի աճերի արագացմամբ: Շինարարության և ծառայությունների աճի տեմպերը նույնպես արագացել են: Արդյունքում՝ հունվար-փետրվարին տնտեսական ակտիվության աճը կազմել է 13.6%: Արդյունաբերության աճի տեմպի արագացման միտումները նկատվել են դեռ նախորդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներից, ինչը շարունակվել է նաև 2024թ. հունվար-փետրվար ամիսներին՝ պայմանավորված հիմնականում ոսկերչական արտադրատեսակների արտադրության աճի բարձր տեմպերով:

Գծապատկեր 3.1. ՀՆԱ-ի իրական աճ (%) և նպաստումներ (տ.կ.)



Վերջին ամիսների զարգացումների արդյունքում, ոսկերչության առաջանցիկ աճերով պայմանավորված՝ հունվարին ՏԱՑ-ի աճն ապահովող հիմնական ճյուղը եղել է արդյունաբերությունը, որին հաջորդել են առևտրի (մեծածախ առևտուր) և ծառայությունների (ֆինանսական և ապահովագրական գործունեություն, կացության և հանրային սննդի կազմակերպում) ոլորտները: Արդյունաբերության ոլորտի վրա բացասաբար է ազդել հանքագործական արդյունաբերության 10.1 տոկոս անկումը (նպաստումը՝ -2.3 տոկոսային կետ): Շինարարության ոլորտը նույնպես նպաստել է աճին: Ընդ որում՝ շինարարության աճն ըստ ֆինանսավորման աղբյուրների հունվարին պայմանավորվել է հիմնականում բնակչության և կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության աճով:

Գծապատկեր 3.2. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը (դիսկրետ, %)



Գծապատկեր 3.3. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուտակային, %)



Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 9.3%-ով՝ կազմելով 273,425 դրամ (ընդ որում՝ պետական հատվածում աճել է 11.2%-ով՝ կազմելով 204,732 դրամ, իսկ ոչ պետական հատվածում՝ 8.5%-ով՝ կազմելով 301,727 դրամ): Իրական աշխատավարձը 1.7% գնանկման պայմաններում աճել է 11.1%-ով:

Հունվարին պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը նվազել է 5.1%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել՝ շուրջ 5.6%-ով, կազմելով 727,365 մարդ, պայմանավորված հիմնականում առևտրի, կրթության, ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտներում աշխատողների թվի աճով:

Գծապատկեր 3.4. Միջին ամսական աշխատավարձ, վարձու աշխատողներ, (դիսկրետ)



ՀՀ անշարժ գույքի շուկայում հունվար ամսին գները շարունակել են աճել, չնայած որ աճի տեմպը դեկտեմբերի նկատմամբ դանդաղել է: Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը դեկտեմբերի համեմատ ըստ վարչական շրջանների տատանվել է -0.3-ից 1.4% շրջանակներում, իսկ նախորդ տարվա հունվար ամսվա նկատմամբ՝ 8.5-ից 16.7% շրջանակներում՝ ամենաբարձր գինը գրանցելով Կենտրոն վարչական շրջանում (1մ^2 մակերեսի համար՝ 900,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում (1մ^2 մակերեսի համար՝ 228,100 դրամ): Մարզերում բնակարանների շուկայական միջին գների աճը դեկտեմբերի համեմատ տատանվել է -1.5-ից 3.3% շրջանակներում, իսկ նախորդ տարվա հունվար ամսվա նկատմամբ՝ 1.1-33.8%՝ ամենաբարձր գինը գրանցելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում (1մ^2 մակերեսի համար՝ 437,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Լոռու մարզի Թումանյան քաղաքում (1մ^2 մակերեսի համար՝ 26,500 դրամ):

4. Դրամավարկային քաղաքականություն: Փետրվարին արձանագրվող գնանկման տեմպերը խորացել են: 12 ամսյա գնաճը կազմել է -1.7%, իսկ բնականոն գնաճը կազմել է -0.7%: Փետրվարին ՀՀ ԿԲ խորհուրդը տոկոսադրույքների վերաբերյալ որոշումներ կայացրել:

Գծապատկեր 4.1. Գնաճը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը



12 ամսյա գնաճը շարունակել է պայմանավորվել հիմնականում սննդամթերքի գնաճի էական բացասական (-3.1 տոկոսային կետ) նպաստմամբ, որին որոշակիորեն հակակշռել են ծառայությունների, ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների և ոչ պարենային ապրանքների դրական նպաստումները՝ համապատասխանաբար՝ 1.0, 0.3 և 0.2 տոկոսային կետերով:

Գծապատկեր 4.2. 12 ամսյա գնաճին նպաստումները, %-ային կետ



5. Ֆինանսական միջնորդություն: Փետրվարին բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ՝ բնորոշվելով նաև ավանդների նկատմամբ վարկերի առաջանցիկ

աճով: Այսպես, ի տարբերություն նախորդ տարվա նույն ամսվա, վարկերի ծավալների աճը (21.9%) զգալիորեն գերազանցել է ավանդների ծավալների աճին (12.2%): Ռեզիդենտների վարկերի աճը կազմել է 21.7%, իսկ ռեզիդենտների ավանդների աճը՝ 15.2%: Վարկերի բարձր աճը ըստ ոլորտների շարունակել է ընդգրկուն լինել. ամենաբարձր նպաստումը շարունակել են ապահովել հիփոթեքային և շինարարության և սպառողական վարկերը, սակայն տնտեսության ոլորտների (հատկապես՝ շինարարության և սպասարկման ոլորտների, և բացառությամբ արդյունաբերության) վարկավորումը ևս աճում է հիմնականում բարձր տեմպերով: Ավանդների և վարկերի ծավալների տարբերությունը, որը վերջին 2 տարիների ընթացքում էականորեն բարձրացել է և ապահովում է զգալի իրացվելիության բարձիկ, սկսել է աստիճանաբար փոքրանալ: Ոչ ռեզիդենտների ավանդներն աճել են շուրջ 48 մլրդ դրամով (3.7% աճ) նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ: Պատմականորեն այն շարունակում է պահպանվել բարձր մակարդակում (2022թ.-ի փետրվարի ցուցանիշից բարձր է շուրջ 488 մլրդ դրամով):

Գծապատկեր 5.1. Բանկային համակարգի վարկերի և ավանդների 12 ամսյա աճերը, %



ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները փետրվարին նվազել են, իսկ վարկերի և ավանդների տոկոսադրույքները հիմնականում անփոփոխ են: Փետրվարին պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը շուրջ 2.6 անգամ գերազանցել է առաջարկը, ինչի արդյունքում պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են: Վարկերի և ավանդների տոկոսադրույքները ընդհանուր առմամբ շարունակել են գտնվել իրենց միջին մակարդակների շրջականակներում՝ բացառությամբ հիփոթեքային և սպառողական վարկերի, որոնց տոկոսադրույքների աճը պահպանվել է դրանց նկատմամբ բարձր պահանջարկի ազդեցությամբ:

Գծապատկեր 5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, %



6. Հարկաբյուջետային հատված[1]:

ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը հունվար ամսվա համեմատ փետրվարին արագացել է: 2024թ.-ի փետրվարին հարկային եկամուտները կազմել են 132.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա փետրվարի նկատմամբ աճելով 8.7%-ով: 2024-ի հունվար-փետրվար ամիսներին հարկային եկամուտները կազմել են 309.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 3.7 %-ով:

Գծապատկեր 6.1. Հարկային եկամուտների աճի տեմպը, %



Փետրվար ամսվա հարկային եկամուտների աճի աղբյուրները եղել են ավելացված արժեքի հարկը և եկամտային հարկը՝ համապատասխանաբար 4.9 և 4.0%-ային կետ նպաստումներով: Բացասական նպաստում են ունեցել շահութահարկը(-3.7%-ային կետ) և ակցիզային հարկը(-1.6%-ային կետ):

Գծապատկեր 6.2. Հարկային եկամուտների աճին նպաստումները, %-ային կետ



Պետական բյուջեի ծախսերի աճը առաջանցիկ է եղել եկամուտների նկատմամբ: Փետրվար ամսին պետական բյուջեն եկամուտները կազմել են 140.1 մլրդ դրամ (աճը՝ 8.3%), իսկ ծախսերը՝ 204.9 մլրդ դրամ (աճը՝ 34.0%): Ծախսերը ընդգրկել են 170.2 մլրդ դրամի ընթացիկ և 34.8 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 36.7 մլրդ դրամ: Ընթացիկ ծախսերը նախորդ տարվա փետրվարի համեմատ աճել են 16.2%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ ավելի քան 4 անգամ:

2024-ի հունվար-փետրվար ամիսներին պետական բյուջեի եկամուտները կազմել են 324.4 մլրդ դրամը (աճը՝ 3.9%), իսկ ծախսերը՝ 320.7 մլրդ դրամ (աճը՝ 24.5%):

Գծապատկեր 6.3 Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը



Չնայած ծախսերի առաջանցիկ աճին՝ ձևավորվել է հավելուրդային պետական բյուջե: Փետրվարին ծախսերը եկամուտներին գերազանցել են 64.9 մլրդ դրամով, սակայն հունվարին գրանցված հավելուրդի հաշվին հունվար-փետրվար ամիսների հավելուրդը կազմել է 3.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 54.5 մլրդ դրամ հավելուրդի համեմատությամբ:

[1] Հարկային եկամուտների և պետական բյուջեի ծախսերի կազմում ներառված է հիպոթեկային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ ինչպես հաշվետու, այնպես էլ՝ համեմատվող ժամանակահատվածների համար: